

Հաշվետվություն

Անձնական տվյալների պաշտպանության գործակալության փորձագետ Մկրտիչ
Էսաչատրյանի

Ըստ Անձնական տվյալների պաշտպանության գործակալության (այսուհետ նաեւ՝ Գործակալություն) փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագրի նպատակների՝ հայտնում եմ, որ 2024թ. մայիսի տասներեքից 2025թ. մայիսի տասներեքն ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ հիմնական աշխատանքները.

- Անձնական տվյալներ մշակողներին եւ անձնական տվյալների սուբյեկտներին տրամադրվել է անձնական տվյալների մշակման վերաբերյալ խորհրդատվություն (որպես խորհրդատվություն է դիտվում նաև իրականացված ուսուցումը)՝ կապված տեղեկատվական անվտանգության, անձնական տվյալների առցանց պաշտպանության եւ նմանաբնույթ այլ հարցերի վերաբերյալ:
Իմ կողմից տրամադրված խորհրդատվությունը վերաբերում է հիմնականում հետևյալ թեմաներին.
 - **սոցիալական ցանցերում ինքնության գողության և քաղաքացիների նկարների գողության ու դրանք կայքից հեռացնելու վերաբերյալ**
 - **Երեխաների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ,**
 - **Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի կիրառման վերաբերյալ (առցանց տիրույթում),**
 - **Համացանցում կեղծ (fake) էջերը հեռացնելու վերաբերյալ,**
 - **Հավելվածների օգտագործման վերաբերյալ,**
 - **Կիրեռանվտանգության եւ համացանցային հիգիենայի վերաբերյալ:**

- իրականացվել են ուսումնասիրություններ, մշակվել ուղեցույցներ, տեղեկատվական նյութեր, հայտարարություններ, գրություններ, առաջարկություններ, դիտողություններ կամ տրամադրվել եզրակացություններ դրանց վերաբերյալ:

Մասնավորապես.

- հրապարակել են մի շարք խորհրդատվական նյութեր ու տեսանյութերՖեյսբուք սոցիալական ցանցում տարածված խաբեությունների վերաբերյալ:
- Գործակալության ֆեյսբուքյան էջում հրապարակվել է 60-ից ավելիիրազեկող նյութ Գործակալության վարույթների, խորհրդատվությունների վերաբարյալ, ինչպես նաև տվյալների հետ ճիշտ վարվելու կանոնների մասին խորհրդատվական նյութեր, համցանցում տարածված վիրուսներից զերծ մնալու մասին հայտարարություններ:
 - Մասնակցել են ռեեստրի վարման էլեկտրոնային մասի ապահովման աշխատանքներին:

- **Հարցազրույց «Հանրային հեռուստաընկերությանը»՝ Հեռախոսահամարները նույնականցնող հավելվածների մասին**
- **Հարցազրույց «Հանրային հեռուստաընկերությանը»՝ Էլեկտրոնային հասցեին կասկածելի նամակներ ստանալիս անձնական տվյալներ չտրամադրել**
- **Հարցազրույց «Հանրային հեռուստաընկերությանը»՝ Կրիպտոարժույթները՝ ցանցահենների թիրախում. տարածվող գովազդները կեղծ են**

➤ **Հարցազրույց «Ազգային ցանց» մեդիային՝ Բանկային խարդախությունների վերաբերյալ**

- փորձագետը վարել է Գործակալության էջերը սոցիալական ցանցերում Գործակալությունն ունի ֆեյսբուքյան էջ՝ Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն / Armenian PDPA անվանմամբ հետեւյալ հղմամբ՝ (<https://www.facebook.com/PersonalDataArmenia/>):

Սույն հաշվետվությունը ներկայացնելու օրվա դրությամբ.

- Գործակալության էջն ունի 16000-ից ավելի բաժանորդ,
- Հրապարակման լուսաբանումը՝ post reach (այն մարդկանց ունիկալ թիվը, ովքեր տեսել են էջի գրառումները ճամսվա ընթացքում կազմել է ավելի քան 220,000),
- էջում իրականացվել է ավելի քան 60 բովանդակային հրապարակում (տեղեկատվական նյութ, հայտարարություն եւ այլն),
- էջի միջոցով տրամադրվել է գրագրություն (հիմնականում առցանց խորհրդատվություն):
- Գործակալության խումբը ֆեյսբուքում ունի 400-ից ավելի մասնակիցներ: Խումբն օգտագործվում է իրազեկման ու առցանց ուսուցումներ կազմակերպելու համար:
 - հաշվի առնելով քաղաքացիների ներկայացվածությունը Instagram հարթակներում Գործակալությունն ունի հաշիվներ նաև այս սոցիալական ցանցում, բաժանորդները՝ շուրջ 250:

- Գործակալության բաժիններին վարույթների իրականացման կամ մոնիթորինգների անցկացման ընթացքում եւ բաժինների իրավասությունների ոլորտում գտնվող այլ հարցերում տրամադրված փորձագիտական օժանդակությունը ներառում է ինչպես վերոնշյալը, այնպես էլ աշխատանքային կարգով տրամադրվող խորհրդատվությունն այն իրավական ակտերի վերաբերյալ, որոնց մասին Գործակալությունը կարծիք է ներկայացրել:

Անձնական տվյալների պաշտպանության
գործակալության փորձագետ Մկրտիչ Խաչատրյան

13.05.2025թ.

A handwritten signature in black ink, appearing to be 'Mkrtich Khachatryan', written in a cursive style.